ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5391-Ա « 05 » նոյեմբերի 2026 թ.

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 7-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունը և 12-րդ կետի 1-ին ենթակետը.

1.Երևանի քաղաքապետարանի կարիքների համար տվյալների մշակման կենտրոնի վերազինման և մասնավոր ամպային ենթակառուցվածքի վերափոխման նպատակով սերվերային և հարակից սարքավորումների, ինչպես նաև անհրաժեշտ տեխնիկական միջոցների ձեռքբերման գործընթացի իրականացման պատասխանատու ստոևաբաժանում սահմանել «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ին:

2. Լիազորել «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ին՝ ահովելու պայմանագրերի ամբողջությամբ կամ մասնակի լուծման, գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու, ինչպես նաև երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների գումարի վերադարձի գործառույթների իրականացումը:

3.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը վերապահել «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենին:

4.Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ